

ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ ՀԱՌԻ ՅՈԲԻԼՅԱՐԸ

ՊԵՏՐՈՍ ԲԵԴԻՐՅԱՆ. ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼԸ
(Ծննդյան 90-ամյակի առթիվ)*

Լեզվաբան, բ. գ. դ., պրոֆ. Պետրոս Սարգսի Բեդիրյանը ծնվել է 1931 թ. սպարհի 7-ին Միրիայի Հաղեպարում: Հայրենադարձել է 1947 թվականին: Հայրենիքում փայլուն ավարտել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը, ապա՝ ասպիրանտուրան և 1955 թից անցել դասավանսիկան աշխատանքի: Տաննամյակներ շարունակ եղել է հարազատ բուհի, Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգեուոր ճեմարանի և Վազգենյան Հոգեուոր դպրանոցի դասախոս, դասավանդել ժամանակակից Հայոց լեզու, գրաբար, ընդհանուր լեզվաբանություն, հատուկ դասընթացներ: Նա աղնիվ է, սկզբունքային, միրված ու գնահատված:



Գիտական գործունեության սկիզբը եղել է 1955 թվականը: Երիտասարդ գիտնականը համարձակուել մուտք գործեց լեզվաբանության ամենալծվար բաժիններից մեկի՝ ստուգաբարանության ոլորտը և Հայաստանի գիտական պարբերականներում («Տեղեկագիր հասարակական գիտությունների», «Պատմա-բանակրական հանդես»), Միլանի ակադեմիական 2 տարեգրքերում (Փրանսերեն), նաև անգլերեն մի հոդվածում (արժանացել է Հայաստանում իրանի դեսպանության մրցանակին) հաջորդաբար ներկայացրել է իր ստուգաբարանությունները, դրանց անդրադարձել «Հայերենագիտական հոդվածներ և նորթեր» ժողովածուում (Երևան, 2012): Պ. Բեդիրյանը ստուգաբանել է 60 արմատ ու բառ՝ ճնշեվրոպական արմատներ, ինչպես և փոխառություններ արաբերենից, պարսկերենից ու այլ լեզուներից: Դրանցից են՝ հաւաք, կնճիթ, ծափ, ձեղուն, ոլուն, նուադ, օժանդակ, կութ, մատն «ըլուր», խալոկ, խառար կամ խալար, ախրիզան «ծաղիկներ են», ասլի «արմատ կապած բույս», հազիմաթ «մի տեսակ վհուկ», խնդակել «նեղել», կիզ «խորոված», շարաբոյր «գդակի վրա գցելու կանացի քող», խորչ կամ խորչակ, հեց «անլի շրջանակը», հեծան, ճիւղ, ճիւ և այլն:

Մենագրություններում՝ «Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն» (Երևան, 1973), «Ժամանակակից հայերենի ոչ փոխարքերական կայուն բառակապակցությունները» (Երևան, 1990), «Ակնարկներ ժամանակակից հայերենի դարձվածաբանության» (Երևան, 2007) հոդվածներում և «Հայերեն դարձվածքների ընդարձակ բառաբանում» (Երևան, 2011) Պ. Բեդիրյանը շարադրել է հայերենի դարձվածաբանության ինքնամիպ տեսառություն: Հակադրվելով ընդհանուր դարձվածաբանության մեջ

* Ներկայացվել է 15. II. 2021 թ., ընդունվել է տպագրության 26. II. 2021 թ.:

արմատավորված այն կարծիքին, թե կայուն կապակցությունները կաղապարելի չեն՝ նա ապացուցել է, որ այդպիսի բառակապակցությունների, այդ թվում դարձվածքների (իդիոմ) կաղապարներ էլ գոյություն ունեն (և ոչ միայն հայերենում). այս իմաստով արժեվորվել է լեզվաբանի ներդրումը ընդհանուր դարձվածքաբանության ու լեզվաբանության մեջ առհասարակի: Հմուտ դարձվածքաբանը նկարագրել է 315 կաղապար, դրանցից մի քանիսը՝ ուսւերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն գուգահեռներով:

Գրաբարի հմուտ դասախոս Պ. Բեղիրյանն ինքնուսույցի սկզբունքով ստեղծեց «Լեզու նախնեաց» գրաբարի դասագիրքը նախ՝ արևմտահայերեն (Բեյրութ, 1972, Նիկոսիա, 1989), ապա՝ արևելահայերեն՝ հոգևոր կրթական հաստատությունների համար (Ս. Էջմիածին, 1997, 2000, 2006):

Հայերեն գիտահանրամատչելի գրականության լավագույն նմուշներից է Պ. Բեղիրյանի «Բառերի խորհրդավոր աշխարհից» գիրքը (Երևան, 1985, 1989, գրքի նոր տարբերակը լույս է տեսել 2003-ին «Բառերի խորհրդավոր աշխարհում» վերնագրով): Այս գրքում ամփոփված 200-ից ավելի գրույցները կարծես գեղարվեստական վոքրիկ ստեղծագործություններ են՝ բառերի իսկապես խորհրդավոր աշխարհի բազում գանձերի մասին: Հեղինակն ընթեցողին, որ աշակերտ է, ուսանող, ուսուցիչ ու դասախոս, պարզապես հետաքրքրասեր մարդ, քայլ առ քայլ առաջնորդում է բառերի գանձարանում: Եվ քանի որ բառի ընկալման նուրբ զգացողություն ունի, հայերեն բառերի «կենսագրությունն» ըստ ամենայնի գիտի, հայերեն և օտար բառերի խորքային, շատերին ոչ նկատելի կապեր է տեսնում և մատուցում պարզ ու հյութեղ լեզվով, արդեն քանի՛ սերունդ գիրքը կարդում է մեծագույն հաճույքով՝ մոռանալով, որ այն նվիրված է լեզվաբանության ամենալժվար, բայց հետաքրքրական բաժնին՝ ստուգաբանությանը: Հարյուրավոր բառերի և դարձվածքների ծագումը, անցած ուղին, իմաստային ընդգրկումն ու կազմությունը, ոճական արժեքը, այլակեզու (հին հունարեն, լատիներեն, պարսկերեն, արաբերեն, ուսւերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն) գուգահեռները գիտականորեն ճիշտ և համոզիչ են՝ շարադրված գրավիչ, աշխախտ ու սրամիտ:

Դպրոցին սերտորեն կապված գիտականն իր գործունեության ընթացքում նաև մեթոդական խնդիրների է անդրադարձել: Հայերենի ուսուցիչներին է ուղղված «Մայրենի ուսուցման հարցեր» (Երևան, 1982) հոդվածների ժողովածուն:

Մանկավարժ-գիտնականին մշտապես հետաքրքրել են ժամանակակից հայերենի գործնական խնդիրները, խոսքի մշակույթի հարցերը: Դրանց են նվիրված Պ. Բեղիրյանի զույգ աշխատանքները՝ արևմտահայերենի համար՝ «Եկէք Ճիշդ Խօսինք Ու Գրենք» (Բոստոն, 1993) օժանդակ ձեռնարկը և արևելահայերենի համար՝ «Հայ լեզուն և մեր խոսքը» (Երևան, 1999, 2007) արևելահայերենի խոսքի գործնական ուղեցույցը: Առաջին գիրքը արևմտահայերենի ուսուցիչների «շտապ օգնությունն է», իսկ երկրորդը շատ ու շատ ուսուցիչների, դասախոսների, լրագրողների, խմբագիրների սեղանի գիրքը, վատահելի աղբյուր, որի շնորհիվ կարելի է կողմնորոշվել լեզվական տարատեսակ հարցերի մեջ, որոնք առնչվում են բառերի արտասանության, բառերի ու բառաձերի գործածության, կապակցություն-

ներ, նախադասություններ, խոսք կառուցելու ոճական և տրամաբանական դժվարություններին:

Բազմաթիվ են Պ. Բեղիրյանի և իր համահեղինակությամբ ստեղծված դասագրքերը, ուսումնական ու ուսումնաօժանդակ ձեռնարկները: Դրանցից են՝ Սփյուռքի դպրոցների համար՝ «Հայ գրականութիւն. Ը տարի» դասագիրքը (Երևան, 1979, 1984, համահեղինակներ՝ Ս. Տարոնցի, Պ. Մարգարյան), «Հայաստան Աշխարհ» և Սփյուռքի հայերենի ուսուցիչների համար՝ «Զրոյցներ Արևմտահայերէնի Դասաւանդութեան Վերաբերեալ» (Կահիրե, 2006), հայաստանցի դպրոցականների համար՝ «Հայոց լեզվից 50 հարցարան» (Երևան, 1992, համահեղինակներ՝ Լ. Խաչատրյան, Պ. Գյուրջինյան) ձեռնարկը՝ մեզանում առաջին փորձը, ուսուսիսու հայերի համար՝ «Սահմանադրություն և պատմություն» (Երևան, 2004, 2006) և այլն: Նշենք, որ ուսուցման խնդիրներով մշտակես զբաղված գիտնական-մանկավարժը տարբեր տարիներին հայրենիքից գործուղվել է Սփյուռք (ԱՄՆ, Կանադա, Եգիպտոս, Արգենտինա, Ուրուգվայ)՝ հայերենի ուսուցիչներին մեթոդական օգնություն ցույց տալու նպատակով:

Պ. Բեղիրյան-լեզվաբանի գիտական արտադրանքի մեջ տեսակարար մեծ կշիռ ունեն բառարանները:

Հմուտ դարձվածաբանի բառարանագրական գործունեությունը սկսվել է դարձվածաբանական բառարանով: Նրա «Դարձվածաբանական բացատրական բառարանը» (Երևան, 1971), որ թեև դպրոցական, համառոտ է, բայց առաջին դարձվածաբանական բառարանն է մեզանում:

Տասնամյակներ անց Պ. Բեղիրյանն ավարտեց իր կյանքի գործը՝ հայերենի դարձվածաբանական կոթողային բառարանը՝ «Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարանը» (Երևան, 2011): Ստվարածավալ (բաղկացած՝ 1.404 մեծադիր էջերից): Սա անվանի դարձվածաբանի և բառարանագրի կեսդարյա տքնածան ու բարեխիղճ աշխատանքի արգասիքն է: Բառարանը ներկայացնում է հայերեն 25.310 դարձվածք: Արանք, այսպես կոչված, բուն դարձվածքներն են, այն կայուն բառակապակցությունները, որոնք վերաիմաստավորված են, օժտված փոխաբերական-այլաբերական իմաստով (բնականաբար, սրանցից դուրս են առած-ասացվածքները և միագաղաթ դարձվածքները, որոնց միայն մեկ բաղադրիչն է յուրահատուկ իմաստ ձեռք բերած լինում):

Բառարանային միավորներ են դարձել արևելահայերեն ու արևմտահայերեն գրական, խոսակցական, բարբառային դարձվածքները՝ իրենց տարատեսակ տարբերակներով, բնագրային համապատասխան օրինակներով (բարբառայինների մի մասը միայն՝ բանավոր խոսքից): Դարձվածային՝ հսկայական նյութը հեղինակը քաղել է հարյուրավոր սկզբնաղբյուրներից՝ գրական ստեղծագործություններից (Սայաթ-Նովայից, Նաղաշ Հովհաննից, Խաչատրյալը Աբովյանից մինչև մեր օրերը, այդ թվում՝ թարգմանական), հայրենի և սփյուռքյան մամուլից, հեռուստատեսությունից ու ռադիոյից: Եվ հայկական դարձվածանու այդ հսկայածավալ նյութը կարող է հիմք դառնալ լեզվաբանական տարբեր հետազոտությունների:

Հեղինակն այսուհետև հրատարակեց այս բառարանի համեմատաբար սեղմ տարբերակը՝ «Հայերեն դարձվածքների բացատրական բառարանը»

(Երևան, 2012), որի պարունակած նյութը՝ 7.052 միավոր, նախատեսված է արդեն զանգվածային օգտագործման համար՝ ի տարբերություն նախորդի:

Հայ բառարանագրության մեջ նոր խոսք է «Հայերեն շրջասությունների բառարանը» (Ա. Էջմիածին, 2002, Երևան, 2006): Մեղանում առաջին անգամ մեկ բառարանում մեկտեղվել են արդի հայերենի (արևելահայերեն և արևմտահայերեն) 2.000-ից ավելի շրջասություններ, որոնք երկար տարիների ընթացքում հեղինակը քաղել է մեծաթիվ աղբյուրներից ու ներկայացրել բնագրային նմուշներով: Բառարանը գիտածանչողական մեծ արժեք ունի: Շրջասական կապակցությունների և բառերի միջոցով ներկայացվում են աշխարհը, Հայաստանը, այլևայլ առարկաներ, անձեր, գործողություններ ու այլն, ինչպես՝ կանաչ աշխարհամաս, կենդուրուների երկիր, հինգերորդ աշխարհամաս – Ավստրալիա, մեծ քանաքեռոցի – և. Աբովյան, Հայաստանի լեռների սրնգահար – Համաստեղ, հայկական մենշեն – լոշտակ, սպիտակ պատանք հագնել – ձյունով ծածկվել և այլն: Հեղինակը մատնանշում է տարբերակներ, ինչպես՝ Աղամի հագուստով / Աղամի ու Եվայի հագուստով / զգեստով – բոլորովին մերկ, տալիս համեմատելի միավորներ, ինչպես՝ Աղամի / Եվայի մերկությամբ, բազմաթիվ շրջասությունների պարագայում նշվել են մեկից ավելի իմաստներ, ինչպես՝ հյուսիսային Վենետիկ (1. Ամստերդամ, 2. Պետերբուրգ, 3. Ստոկհոլմ, 4. Բրյուգե) և այլն:

Հիմնարար աշխատանք է Պ. Բեդիրյանի «Հայերեն թեավոր խոսքեր» բառարանը (Երևան, 2007), որ լեզվամշակությային և խմացական հակայական տեղեկատվություն է պարունակում: Այն ընդգրկում է հայերեն գրավոր (հազվադեպ՝ նաև բանագոր) խոսքում հանդիպող 2.265 թեավոր խոսքեր: Բառարանում տրվում են, այսպես կոչված, «միջազգային» թեավոր խոսքերի՝ ուսուերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն համարմեքները: Բնագրային նմուշներով ներկայացվող այդ խոսքերը (զրանք մեծապես նպաստում են իմաստի ընկալմանը) առավելաբար ծագել են Աստվածաշնչից, Հունակումեական դիցաբանությունից, պատմական հանրահայտ իրադարձություններից, համաշխարհային (հիմնականում ելլորպական) գրականության գոհարներից: Բառարանի թեավոր խոսքերի զգալի մասը հայկական ծագում ունի: Դրանք գալիս են մեր գրականությունից, բանահյուսությունից, պատմությունից, երբեմն՝ նաև ֆիլմերից: Այսպես՝ Հիմի Էլլունաք (Ը. Պատկանյան) «Էլլի՝ հանդուրմենք. ինչքա՞ն լուռ մնանք», Նրբացուցիչ (մելմացուցիչ) դեպք հանցանաց (Զ. Պարոնյան) «մեղքը, հանցանքը, զանցանքը փոքրինչ արդարացնող, մեղմացնող հանգամանք» (Հեղնական), սիրուհու չափ տենչալի, մահվան չափ անդիմադրելի (Նար-Դու) «չափազանց զորավոր ապրում, պահանջ և այլն», ուղեղային մորմոք (Եղ. Չարենց) «թյուր դատողություն, հիվանդ երևակայություն» և այլն:

Թեավոր խոսքերը ներկայացնում են հայերենի տարբեր գոյավիճակներ և զբանություններ՝ գրաբար (Ծանի՛ր զքեկ «առաջին հերթին ինքդ քե՛զ ճանաչիր, քո հնարավորությունները, ծագումը ...», Հունձք բազում են, եւ մշակք սակաւ «ասպարեզում գործ շատ կա, բայց նվիրված աշխատողներ՝ քիչ» և այլն), արևելահայերեն (տառապանքս փորձ ունի, ամեն մեռնողի

երանի տալ և այլն), արևմտահայերեն (Հովվերգության ճյուղին կպատկանի «անիրական, խոսքի նյութի հետ կապ չունեցող բան է» և այլն), խոսակցական լեզու ու բարբառ (Նաջարյանը փոշմանել ա «կատակով կամ հեղնանքով ասվում է մեկի մտափոխության, մի գործից ետք քաշվելու մասին», մի մուշտի [բռունցքի հարված] եմ տվել «ի՞նչ մեծ հարված եմ հասցրել որ» և այլն):

Կառուցվածքային առումով թևավոր խոսքերը բառեր են (կովախնձոր «կովի, գժոտության պատճառ, առիթ», Գոբսեկ «ծայրաստիճան Ժատ մարդ» և այլն), բառակապակցություններ (Ալբակամի գառ «զոհաբերվելու պատրաստ էակ» և այլն) ու նախադասություններ (Համսիբալը դարպանների մոտ է «մտալու մեծ վտանգ է սպառնում» և այլն), որոնք վերաիմաստավորված են և պատրաստի ներմուծվում են խոսքի մեջ:

Հայերենի թևավոր խոսքերի բառարանից հետո լույս տեսավ՝ հաջորդը՝ «Սուլրբրային թևավոր խոսքեր» բառարանը (Երևան, 2016), որն ընդգրկում է 528 միավոր՝ ոռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն համարժեքներով։ Սուլրբրային թևավոր խոսքերի մեջ առանձնանում են այնպիսիք, որոնց սուլրբրային ծագումն առաջին խսկ հայացքից զգալի է՝ ահեղ դաստատան, աղքատ Ղազարոս, աճեցնե՛ք և բազմացնե՛ք, ամեն բան իր ժամանակն ունի, այր և կի՞ն՝ մեկ մարմին, անտառի որդի և այլն, և նրանք, որոնց աստվածաշնչյան ծագումն «անզեն աչքով» չի երևում, ինչպես՝ ամբողջ սրտով, անմեղ գառնուկ, աչքի լույսի պես պահել, առանց դեմքին (ու դիրքին) նայելու, արևի (լուսնի) տակ ոչինչ նոր չէ և այլն։ Դրանց մի մասը մինչև օրս գրաբարով է մասացել մեր խոսքի մեջ, ինչպես՝ ակն ընդ ական, ատամն ընդ ատաման, ձայն բարբառոյ յանապատի և այլն։

Գրեթե յուրաքանչյուր թևավոր խոսքի համար բերվում է նրա գործածությունը հայ դասական և ժամանակակից արևելահայ ու արևմտահայ գրականության, ինչպես նաև մամուլի լեզվում, մատնանշվում ու ներկայացվում է Ասովածաշնչի այն հատվածը, որից անմիջականորեն կամ որոշ փոփոխությամբ (կառուցվածքային կամ իմաստային) ծագում է տվյալ խոսքը։

Պ. Բեղիբրյանը ստեղծել է ոչ միայն միալեզվյան, այլև երկեզրվյան ու եռալեզվյան բառարաններ։ Առաջինը «Ռուս-Հայերեն, հայ-ռուսերեն բառարանն» է (Երևան, 1987, ապա՝ 1988, Դ. Անմեղիկյանի և Զ. Ղարիբյանի համահեղինակությամբ), որը կազմված է գործնական սկզբունքով և պարունակում է առաջին բամնում 20.000 բառ և դարձվածք և շուրջ 25.000 երկրորդ բամնում։ Հետազայտվ լույս տեսավ՝ հեղինակային նույն խմբի «Հայ-ռուսերեն գործնական բառարանը» (Երևան, 2010), որն ընդգրկում է այսօրվա հայերենի գործուն բառագանձը։

«Հայերէն-Անգլերէն, Անգլերէն-Հայերէն Գործնական Բառարանը» (Երևան, 2010) անգլիախոս արևմտահայերի ու արևելահայերի համար է։ Այն ընդգրկում է արևմտահայերեն ու արևելահայերեն համարժեք բառագանձ (հայերեն-անգլերեն բամնում 8.000 բառ և դարձվածյային արտահայտություն, անգլերեն-հայերեն բամնում 6.000-ից ավելի միավոր) և իբրև այդպիսին՝ առաջինն է իր տեսակի մեջ։ Բառարանը կազմվել է հայերենը որպես երկրորդ լեզու սովորեցնելու մեթոդներին հետևելով։

Հմուտ բառարանագրի համահեղինակությամբ (Վ. Հայկազյանի, Վ. Ավագյանի հետ) ստեղծվել է «Երկրագործական հայերեն-անգլերեն-ռուսերեն բառարանը» (Երևան, 2016, պարունակում է մոտ 140.000 բառ, 10.000 գլխաբառ), որը մեզանում առաջինն է իր տեսակով՝ ունի գիտագործնական կարևոր նշանակություն:

Բառարանագրական ուշագրավ աշխատանքներից է «Բառերի ընտրությունը» վերնագրով լույս տեսած հոմանիշների գործնական-ռուսումնական բառարանը (Երևան, 2017), որը պարունակում է 4.900 հոմանշային շարք՝ բնագրային նմուշներով, իմաստային նրբությունների և կիրառության յուրահատկությունների մատնանշումով, որոնք օգտագործողին հնարավորություն կտան խոսքի համար անհրաժեշտ ամենահարմար հոմանիշն ընտրելու: Հոմանշային շարքերում հոմանիշի կողքին հարկ եղած դեպքում նշել են նրա իմաստային կամ գործածության տարբերությունները: Օրինակ՝ հոմանշային շարքում՝ անուրջ (քաղցր երազ) – տեսիլք (երևակայելի երազ) – մղձավանշ (ծանր՝ վատ երազ) և այլն: Հոմանիշների տարբերակման հարցում կարեռվել են ոչ միայն նրբիմաստները, այլ հոմանիշների կիրառությունը: Օրինակ՝ կանգնեցնել-ը և կասեցնել-ը իմաստով չեն զանազանվում, սակայն որոշակիորեն տարբերվում են իրենց գործածությամբ. կանգնեցնել-ն ընդհանուր գործածություն ունի, մինչդեռ կասեցնել-ը կապակցելիության յուրահատկություններ է դրսերում. կասեցնում են ընթացքը, վտանգը, առաջխաղաղացումը, հարձակումը (մարտի դաշտում ու մարզադաշտում), օրենքի գործադրումը և այլն:

Վաստակաշատ հայերենագետի հաջորդ աշխատանքը «Հայերեն բառերի ու արտահայտությունների թեմատիկ բառարան-գանձարանն» (Երևան, 2019), որը պարունակում է 299 թեմա: Այս տեսակի բառարաններ (թեզառություններ) անգլերենի, ֆրանսերենի համար ստեղծվել են XIX դ. կեսերից, հայերենի համար դրա կարիքը վաղուց եր զգացվում: Բառարանն օգտակար կինի նրանց համար, ովքեր խոսք շարադրելիս փնտրում են տվյալ թեմային առնչվող անհրաժեշտ բառը կամ արտահայտությունը, կամ դժվարանում են այս կամ այն միավորն ընտրելիս: Օրինակ՝ ազատություն գլխաբառով ներքո տրված են գոյականներ՝ ազատում, փրկություն (վտանգից, կախումից), ինքնիշխանություն, անկախություն, ազատագրություն և այլն, ածականներ՝ քաղաքավան (ազատություն), անձնական, ազատ, ինքնիշխան, ազատագրավան, բայեր՝ ազատել, փրկել (նեղ տեղից, վտանգից, կախումից), ազատագրել (երկիրը, ժողովրդին), ազատություն տալ (գործելու ...) և այլն:

Բառարանագրական նոր աշխատանքներից է «Հայերեն-ռուսերեն-անգլերեն պատկերարանը» (Երևան, 2020)՝ պատկերներով բացատրական բառարանը, որը պարունակում է 4.490 բառ ու կապակցություն, և որի գլխավոր նպատակը մատչելի՝ ամենից ավելի գործածական նվազագույն բառապաշար ներկայացնելն է: Ի դեպ, «Հայերեն» անվանվածի ներքո այստեղ ևս ընկալվում են արևելահայերենն ու արևմտահայերենը հավասարապես: Բառարանում բառերը ներկայացված են թեմատիկ հիմունքով՝ սկսելով «Մեր մարմինը» թեմայից մինչև «Եկեղեցի»: Նյութերը դասավորված են տրամաբանական հաջորդականությամբ, ըստ առօրյա կյանքում իրենց գործածության կարեռության աստիճանի: Պատկերներով բացատրվածնե-

ըից բացի՝ տրվում են թեմային առնչվող բառեր, բառակապակցություններ և արտահայտություններ, իսկ էջի ներքեւում՝ դրանց խոսքային կիրառության նմուշներ (առավելաբար երկխոսության ձևով): Այդպես է, քանի որ բառարանի առաջին հասցեատերը սովորողներն են, ինչպես նաև նրանց ուսուցիչներն ու ծնողները: Իր կառուցվածքի շնորհիվ պատկերաբանը ձեռք է բերում լեզվի ինքնուսույցի արժեք:

Հիշատակելի է Պ. Բեղիրյանի մասնակցությունը Հայ մատենագիրների համաբարբառների կազմման աշխատանքներին. գրաբարագետ լեզվաբանը կազմել է Ղեռնդ Մեծ Պատմիչի «Պատմութիւն» երկի համաբարբառը (Երևան, 1978):

Պետրոս Բեղիրյանի դիմանկարն ամբողջացնող մեր խոսքի ավարտին նշենք, որ գիտնական-դասախոսի գիտամանկավարժական աշխատանքը գնահատվել է: Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի, Գևորգյան Հոգևոր ճեմարանի, Վազգենյան Հոգևոր դպրանոցի և Կիպրոսի Մելքոնյան վարժարանի երկարամյա դասախոսն արժանացել է ՀՀ վաստակավոր մանկավարժի կոչման, պարգևատրվել «Պատվո նշան» (1986), Սուրբ Էջմիածնի «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» (2004) շքանշամներով, «Աշխատանքային արխության համար» (1970) և «Խ. Աբովյան» (1981) մեդալներով: Ամենամեծ գնահատականը, իհարկե, ազնիվ, սկզբունքային դասախոսի և գիտնականի հազարավոր սաների ջերմ վերաբերմունքն ու ակնածանքն է: Նաև բոլոր այն մարդկանց գնահատանքը, որոնք օգտվում են գիտնական մանկավարժի գրաբարի դասագրքերից, արևելահայերեն ու արևմտահայերեն խոսքի ուղեցույցներից, բազմաթիվ բառարաններից:

Մեր ժամանակի ամենաբեղմնավոր հայերենագետն այսօր էլ շարունակում է մեղվաշան աշխատել:

ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՃԻՆՅԱՆ

Բ. Գ. թ., դոցենտ, ՀՀ լեզվի կոմիտեի նախագահ: Գիտական հետաքրքրությունները՝ հայոց լեզվի բառակազմություն և բառակազմական իմաստաբանություն, բառարանագրություն և բառարանագրություն, խոսքարվեստ, արդի հայերենի ուսուցման հարցեր: Հեղինակ (և համահեղինակ) է դպրոցական և համալսարանական դասագրքերի ու ձեռնարկների, ուսումնական և մեթոդական գրքերի, բառարանների և 80 հոդվածի: gyurjidav@mail.ru